Grant Thornton

ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002
Համագործակցության համաձայնագրի շրջանակներում
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի ամփոփիչ
ֆինանսական աուդիտ

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած

ժամանակաշրջանի համար

Grant Thornton

# Ուղեկից նամակ

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Նախագահ՝ պրն. Կարեն Զադոյանին
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 7, բն. 2

28 օգոստոսի 2014թ.

Հարգելի պրն. Զադոյան,

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (Կազմակերպություն) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում Կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի՝ 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ամփոփիչ ֆինանսական աուդիտի հաշվետվությունը՝ Կազմակերպության և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի միջև 2014թ. հունվարի 31-ին կնքված թիվ AT/AUD/008-14 պայմանագրի համաձայն:

Հաշվետվությունը ներառում է՝

- ընդհանուր նկարագրություն,
- անկախ աուդիտորի եզրակացությունը ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ,
- անկախ աուդիտորի դիտարկման եզրակացությունը ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության վերաբերյալ,
- անկախ աուդիտորի եզրակացությունը ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, և
- անկախ աուդիտորի եզրակացությունը համապատասխանության վերաբերյալ:

Ներկայացված հաշվետվությունները և տեղեկատվությունը պատրաստվել են համաձայն (ա) աուդիտորական ծառայությունների վերոնշյալ պայմանագրի մաս կազմող Աշխատանքների նկարագրության և (բ) ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Գլխավոր աուդիտորի գրասենյակի *«Օտարերկրյա շնորհառուների պատվերով իրականացվող ֆինանսական աուդիտի ԱՄՆ ՄԶԳ ուղեցույցի»* (2009թ. փետրվարի լրամշակում):

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Կազմակերպության աշխատակազմին՝ աուդիտի ընթացքում ցուցաբերած օժանդակության և համագործակցության համար:

Հարգանքով,

Էմիլ Վասիլյան
Առաքելության ղեկավար

# Բովանդակություն

| | Էջ |
|---|---|
| Ընդհանուր նկարագրություն | 4 |
| Անկախ աուդիտորի եզրակացություն ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ | 18 |
| Ֆոնդերի օգտագործման հաշվետվություն | 21 |
| Ֆոնդերի օգտագործման հաշվետվությանը կից ծանոթագրություններ | 22 |
| Անկախ աուդիտորի դիտարկման եզրակացություն ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության վերաբերյալ | 30 |
| Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվություն | 32 |
| Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությանը կից ծանոթագրություններ | 33 |
| Անկախ աուդիտորի եզրակացություն ներքին վերահսկողության վերաբերյալ | 36 |
| Անկախ աուդիտորի եզրակացություն համապատասխանության վերաբերյալ | 39 |

# Ընդհանուր նկարագրություն

## Ընդհանուր տեղեկություններ

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ն (ՀԵԻԱ, Կազմակերպություն) հիմնադրվել է 1995թ., ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ արդարադատության նախարարությունում որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 1995թ. մարտի 14-ին: ՀԵԻԱ-ի ստեղծման հիմնական նպատակն էր համախմբել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն: 1999թ.-ից սկսած՝ Կազմակերպությունն ընդլայնել է իր գործունեությունը՝ մարզային գրասենյակներ հիմնադրելով Վանաձորում, Գավառում, Գյումրիում, Կապանում, Գորիսում և Իջևանում:

ՀԵԻԱ-ի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Նալբանդյան փ. 7, բն. 2:

2011թ. սեպտեմբերի 12-ին կնքված թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) ՀԵԻԱ-ին տրամադրել է 599,976 ԱՄՆ դոլար գումարի շնորհ՝ «Աջակցություն շահերի պաշտպանության ազգային կենտրոնների ցանցին» ծրագրի իրականացման համար: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանվել 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. հուլիսի 31-ը, որը Համաձայնագրի՝ հուլիսի 23-ին կնքված 3-րդ փոփոխությամբ երկարաձգվել է մինչև 2012թ. օգոստոսի 21-ը: Համաձայնագրի՝ 2012թ. օգոստոսի 21-ի 4-րդ փոփոխությամբ՝ Ծրագիրը վերանվանվել է «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի»:

Համաձայնագրի՝ 2014թ. հունվարի 17-ի 9-րդ փոփոխությամբ՝ Համագործակցության համաձայնագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները:

- 2015թ. օգոստոսի 20-ը, որը սահմանված էր որպես Ծրագրի ավարտ, փոփոխվել է 2014թ. հունվարի 31-ը,
- Ծրագրի ընդհանուր բյուջեն նվազեցվել է 949,567 ԱՄՆ դոլարով՝ կազմելով 1,450,409 ԱՄՆ դոլար 2,399,976 ԱՄՆ դոլարի փոխարեն,
- 2-րդ տարվա համար նախատեսված Ծրագրի գործունեության փոփոխություն, որը կարտացոլի գործունեության իրականացման վերանայված ժամկետը և ծախսերի կրճատումը:

Ծրագրի փոփոխված բյուջեն ներկայացված է ստորև.

| ԱՄՆ դոլար | ԱՄՆ ՄԶԳ | Համաֆինան-սավորում | Ընդամենը |
|---|---|---|---|
| Աշխատակազմ | 1,015,028 | - | 1,015,028 |
| Այլ ուղղակի ծախսեր | 435,381 | 53,600 | 488,981 |
| | 1,450,409 | 53,600 | 1,504,009 |

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ ՀԵԻԱ-ն կամրապնդի հակակոռուպցիոն կենտրոնների ցանցը, որը բաղկացած է 11 կենտրոններից՝ Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Հակակոռուպցիոն կենտրոնները գործարկվում են հետևյալ երեք հասարակական կազմակերպությունների կողմից.

- Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, որը գործարկում է Երևանի, ՀՀ Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի հակակոռուպցիոն կենտրոնները.
- Արմավիրի զարգացման կենտրոնը (ԱԶԿ), որը գործարկում է Արմավիրի հակակոռուպցիոն կենտրոնը, ԱԶԿ-ի և ՀԵԻԱ-ի միջև ենթադրամաշնորհի պայմանագրի ներքո.
- Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը (ԳՄԱՊ), որը գործարկում է Գեղարքունիքի հակակոռուպցիոն կենտրոնը, ԳՄԱՊ-ի և ՀԵԻԱ-ի միջև ենթադրամաշնորհի պայմանագրի ներքո.

Հակակոռուպցիոն կենտրոններն իրենց գործունեությունն իրականացնում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1 Օրական կտրվածքով անվճար իրավաբանական ծառայությունների մատուցում՝ քաղաքացիների հակակոռուպցիոն բողոքներին արձագանքելու նպատակով.

ա. կոռուպցիայի հետ կապված իրենց իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվության տրամադրում

բ. այդ գործերի հիման վրա կենտրոնների իրավախորհրդատուների կողմից մշակվում են դիմում-բողոքներ, հայցադիմումներ և կոնկրետ գործընթացին վերաբերող իրավական այլ փաստաթղթեր

գ. քաղաքացիներին ցուցաբերվում է աջակցություն իրենց դիմում-բողոքները համապատասխան իրավական մարմիններ ներկայացնելու հարցում, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովվում է հետագա աջակցությունը

դ. կենտրոններին դիմած քաղաքացիներին տրամադրվում է անվճար փաստաբանական ծառայություն դատարանում՝ քաղաքացիական, վարչական և քրեական գործերով, ինչպես նաև պետական, տեղական, իրավապահ, հանրային մարմիններում:

2 Համակարգային և ընթացակարգային բարեփոխումների իրականացում.

Հակակոռուպցիոն կենտրոններ ներկայացված դիմում-բողոքների վերլուծության հիման վրա ծրագրի թիրախ հանդիսացող մարզերում կենտրոնների կողմից իրականացվում են կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային բարեփոխումներին ուղղված գործողություններ օրենսդրության ուսումնասիրությունների կատարման, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների նախագծերի պատրաստման, առաջարկությունների ներկայացման և քննարկումների անցկացման միջոցով:

3 Հակակոռուպցիոն իրազեկության և կրթության ռազմավարություն.

Կոռուպցիայի վերաբերյալ հասարակության ընկալումը բարձրացնելու և հակակոռուպցիոն վարքագիծ ձևավորելու, կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականություն ցուցաբերելու նպատակով ծրագրի թիրախ հանդիսացող մարզերում իրականացվում են հանրային իրազեկման քարոզարշավներ` հիմք ընդունելով թիրախ հանդիսացող մարզերի աշխարհագրական առանձնահատկությունները, Երևանից մարզերի հեռավորությունը, մարզերի աղքատության մակարդակը, մարզերի կոռուպցիոն ռիսկերի մակարդակը և այլ գործոններ:

## Նախորդ աուդիտի առաջարկություններ

Համաձայն *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 4-ի *«Նախորդ աուդիտների արդյունքների դիտարկում»* բաժնի` մենք պարտավոր ենք հաշվի առնել նախորդ աուդիտների արդյունքները և տեղեկանալ բացահայտված այն նշանակալի թերությունների և ներկայացված առաջարկությունների իրականացման կարգավիճակի վերաբերյալ, որոնք ուղղակիորեն կապված են աուդիտի նպատակների հետ:

Մեր կողմից իրականացվող աուդիտի շրջանակներում մենք նաև վերանայել ենք «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրի` 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական աուդիտի արդյունքում Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի կողմից ներկայացված` 2013թ. սեպտեմբերի 6-ին թվագրված դիտարկումների ու առաջարկությունների իրականացման կարգավիճակը:

Իրականացվել են վերը նշված աուդիտորի հաշվետվության հետևյալ առաջարկությունները:

- Ենթադրամաշնորհային պայմանագրերի ներքո հատկացված ֆոնդերի նկատմամբ ներքին վերահսկողություն,
- Ֆոնդերի աղբյուրների և օգտագործման նկատմամբ ներքին վերահսկողություն,
- Համաֆինանսավորման ներդրումների արտացոլումն ԱՄՆ ՄԶԳ-ին ներկայացված հաշվետվություններում,
- Տպագիր նյութերի և հրատարակումների հաշվառումը:

Գեղարքունիքի մարզի ԱԱՊ կողմից հաշվապահական ծրագրի կիրառումը չի իրականացվել:

### Անուղղակի ծախսերի դրույքներ

Աուդիտի շրջանակները չեն ներառում անուղղակի ծախսերի դրույքների ուսումնասիրություն, քանի որ Կազմակերպությունը չունի ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից հաստատված անուղղակի ծախսերի դրույք:

## Ֆինանսական աուդիտի նպատակը և շրջանակը

### Նպատակները

Սույն առաքելության նպատակն է իրականացնել «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի (թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագիր) շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրված միջոցների աուդիտը 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար: Աուդիտն իրականացվել է ԱՄՆ Կառավարության վերահսկիչ պալատի կողմից հաստատված *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* (2011թ. դեկտեմբերի լրամշակմամբ) և ԱՄՆ ՄԶԳ Գլխավոր աուդիտորի գրասենյակի կողմից հաստատված *«Օտարերկրյա շնորհառուների պատվերով իրականացվող ֆինանսական աուդիտի ԱՄՆ ՄԶԳ ուղեցույցի»* (2009թ. փետրվարի լրամշակմամբ) համաձայն:

Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունն աուդիտի ենթակա հիմնական հաշվետվությունն է, որը ներկայացնում է ԱՄՆ ՄԶԳ կողմից շահառու կազմակերպությանը տրամադրված միջոցները, դրանց օգտագործումը և դրամական միջոցների մնացորդները, ինչպես նաև շահառու կազմակերպության համար ԱՄՆ ՄԶԳ կողմից ուղղակիորեն ձեռքբերված ապրանքները և տեխնիկական օժանդակությունը: Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից տրամադրված միջոցների աուդիտի հատուկ նպատակներն են.

- Կարծիք արտահայտել, թե արդյոք ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը բոլոր էական առումներով տալիս է աուդիտի ենթակա ժամանակաշրջանում ԱՄՆ ՄԶԳ կողմից տրամադրված միջոցների, դրանց օգտագործման և ԱՄՆ ՄԶԳ կողմից ուղղակիորեն ձեռքբերված ակտիվների և տեխնիկական օժանդակության ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Համագործակցության համաձայնագրի դրույթների և համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների կամ այլ հաշվապահական հաշվառման սկզբունքի (ներառյալ դրամարկղային մեթոդը կամ մասնակի դրամարկղային մեթոդը), ներառյալ կրեդիտորական պարտքերի և հարակից այլ ծախսերի հաշվեգրումներն արտացոլող լրացուցիչ հաշվարկները:

- Ձեռք բերել Կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ծրագրերին առնչվող ներքին վերահսկողության մասին բավարար տեղեկատվություն և գնահատել այն, այդ թվում՝ ծախսերի համաֆինանսավորման պահանջվող ներդրումների վերաբերյալ ներքին վերահսկողության մասին, ինչպես նաև գնահատել վերահսկողական ռիսկերը և որոշել նշանակալի թերությունները և ներքին վերահսկողության համակարգի էական թուլությունները:

- Ստուգել, թե արդյոք բոլոր էական առումներով Կազմակերպությունն ապահովել է համապատասխանությունը Համագործակցության համաձայնագրին, այդ թվում ծախսերի համաֆինանսավորման ներդրումների առումով, ինչպես նաև աուդիտի ենթակա ժամակաշրջանի ընթացքում գործող և ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ծրագրերին առնչվող այլ իրավական ակտերին:

- Պարզել, թե արդյոք Կազմակերպությունը նախաձեռնել է նախորդ աուդիտի առաջարկությունների իրականացմանն ուղղված պատշաճ միջոցառումներ:

Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության գծով մեր աշխատանքների շրջանակները ներառում են՝

- Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության ուսումնասիրություն՝ որոշելու համար, թե արդյոք այն ներկայացվել է ՝ համաձայն ծանոթագրություն 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման սկզբունքի :

- Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության ուսումնասիրություն՝ որոշելու համար, թե արդյոք Համագործակցության համաձայնագրով պահանջվող ծախսերի համաֆինանսավորման ներդրումները Կազմակերպության կողմից տրամադրվել և հաշվառվել են համաձայնագրի դրույթների համաձայն:

## Աշխատանքների շրջանակները

Մեր աշխատանքի շրջանակը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները.

ա. Ֆոնդերի օգտագործման հաշվետվության գծով մենք գնահատել ենք Ծրագրի իրականացման գործողությունները՝ որոշելու, թե արդյոք կատարված ծախսերը թույլատրելի, վերագրելի և ողջամիտ են՝ համաձայն համաձայնագրի դրույթների, և ի հայտ բերելու այն ոլորտները, որտեղ խարդախություն կամ անօրինական գործողություններ են տեղի ունեցել կամ կարող են տեղի ունենալ՝ ոչ պատշաճ ներքին վերահսկողության հետևանքով: Ուսումնասիրել ենք ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող վերոհիշյալ ծրագրի ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը, այդ թվում՝ ծրագրի բյուջեով նախատեսված գումարները՝ ըստ տեսակների և հիմնական հոդվածների, աուդիտի ենթակա ժամանակաշրջանում ԱՄՆ ՄԶԳ-ից ստացված եկամուտները, կատարված ծախսերը և ԱՄՆ ՄԶԳ կողմից Կազմակերպության օգտագործման համար ուղղակիորեն ձեռքբերված ակտիվները և տեխնիկական օժանդակությունը: Մեր աշխատանքների շրջանակներում իրականացված ընթացակարգերը ներառում են.

1. կատարված և ԱՄՆ ՄԶԳ կողմից փոխհատուցված ծախսերի ուսումնասիրություն, ինչպես նաև կատարված, սակայն դեռևս չփոխհատուցված ծախսերի ուսումնասիրություն, այդ թվում՝ խնդրահարույց ծախսերի հայտնաբերում և դրանց քանակական գնահատում, դասակարգում որպես (ա) անթույլատրելի ծախսեր և (բ) չհիմնավորված ծախսեր,
2. ընդհանուր և ծրագրային մատյանների ուսումնասիրություն՝ որոշելու համար կատարված ծախսերի ձևակերպումների ճշգրտությունը, համադրում ԱՄՆ ՄԶԳ կողմից փոխհատուցված ուղղակի ծախսերի հետ,
3. ֆոնդերի վերահսկողության ընթացակարգերի ուսումնասիրություն, ներառյալ բանկային հաշիվներում գտնվող միջոցները և ֆինանսական հաստատությունների միջոցով դրանց փոխանցումները,
4. (ա)ԱՄՆ ՄԶԳ-ին ներկայացված հատկացման հայտերի հիմնավորումների ուսումնասիրություն, ներառյալ ստացված միջոցների, կատարված վճարումների և առկա ֆոնդերի համադրումը, (բ) Կազմակերպության հաշվապահական հաշվառման մեջ ԱՄՆ ՄԶԳ-ից ստացված բոլոր ֆոնդերի պատշաճ գրանցման և ԱՄՆ ՄԶԳ տվյալների հետ դրանց պարբերաբար համադրումների ուսումնասիրություն,

5. Ստուգում, թե արդյոք Ծրագրի ստացած եկամուտը կամ փոխհատուցումները, որոնք հանդիսանում են ուղղակի կամ անուղղակի ծախսերի վերականգնում, պատշաճ գրանցում են ստացել՝ որպես եկամուտ, կամ որպես ծրագրային ծախսերի հաշիվներից նվազեցում,

6. գնումների գործընթացի ուսումնասիրություն՝ (ա) հիմնավոր առևտրային պայմանների և մրցակցության առկայության տեսանկյունից, (բ) ստացված գների ողջամտության տեսանկյունից, գ) քանակի և որակի նկատմամբ պատշաճ վերահսկողության տեսանկյունից,

7. աշխատավարձերի ուղղակի ծախսերի ուսումնասիրություն՝ (ա) աշխատավարձերի դրույքների ողջամտության և ըստ անհրաժեշտության դրանց հաստատված լինելու տեսանկյունից, (բ) աշխատավարձերի հաշվարկներով դրանց հիմնավորվածության տեսանկյունից, (գ) արտաժամյա աշխատանքի՝ Ծրագրի միջոցներից փոխհատուցման թույլատրելիության տեսանկյունից, (դ) համաձայնագրի և գործող օրենսդրական ակտերի դրույթներին հավելավճարների և օժանդակ հատուցումների համապատասխանության տեսանկյունից,

8. ճանապարհածախսի և տրանսպորտային ծախսերի ուսումնասիրություն, պարզելու համար, թե արդյոք դրանք պատշաճ կերպով հիմնավորված և հաստատված են,

9. ձեռքբերված ակտիվների ուսումնասիրություն, ներառյալ ԱՄՆ ՄԶԳ կողմից Կազմակերպության կողմից օգտագործման համար ուղղակիորեն ձեռքբերված ակտիվները, մասնավորապես՝ (ա) առկայության ստուգում, (բ) նախատեսված նպատակով օգտագործման ստուգում, (գ) գույքային պատշաճ համարակալման և նշումների ստուգում, դ) վերահսկողության և ակտիվների պահպանմանն ուղղված ընթացակարգերի ստուգում,

10. համագործակցության համաձայնագրի շրջանակներում Կազմակերպության կամ ԱՄՆ ՄԶԳ կողմից Կազմակերպության համար ուղղակիորեն ձեռքբերված տեխնիկական օժանդակության և ծառայությունների ուսումնասիրություն, պարզելու համար, թե արդյոք տեխնիկական օժանդակությունը և ծառայություններն օգտագործվել են նախատեսված նպատակների համար՝ Համագործակցության համաձայնագրի դրույթների և գործող իրավական ակտերի համաձայն

11. ստուգել Կազմակերպության ստացված և չծախսված կանխավճարները և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից դեռևս չտրամադրված հատուցումները: Հավաստիանալ, որ Կազմակերպությունը ԱՄՆ ՄԶԳ-ին է վերադարձրել ավելացած կանխիկ գումարները: Հավաստիանալ, որ ԱՄՆ ՄԶԳ-ի միջոցներով ձեռքբերված բոլոր ակտիվները (պաշարները, հիմնական միջոցները, ապրանքները և այլն) օտարվել են՝ համաձայնագրի պայմաններին համապատասխան:

բ. Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության գծով մեր աշխատանքների շրջանակները ներառել են նշված հաշվետվության ուսումնասիրություն՝ որոշելու համար, թե արդյոք Համագործակցության համաձայնագրով պահանջվող ծախսերի համաֆինանսավորման ներդրումները Կազմակերպության կողմից տրամադրվել և հաշվառվել են համաձայնագրի դրույթների և Ծրագրի պահանջների համաձայն:

գ. Ներքին վերահսկողության գծով մեր աշխատանքների շրջանակները ներառել են ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ Կազմակերպության ներքին վերահսկողության ուսումնասիրությունը և գնահատումը, որպեսզի ձեռք բերենք վերահսկողության քաղաքականության և կարևորագույն ընթացակարգերի բավարար ըմբռնում, ինչպես նաև այդ քաղաքականության և ընթացակարգերի՝ գործնականում կիրառման գնահատումը:

Ուսումնասիրության և գնահատման ենթակա ներքին վերահսկողության կարևոր բաղկացուցիչ մասերը ներառել են ֆոնդերի օգտագործման հաշվետվություններում արտացոլված եկամտային և ծախսային հոդվածների նկատմամբ վերահսկողական մեխանիզմները: Որպես աուդիտորական ընթացակարգերի մաս՝ մեր նպատակն է եղել.

1. աուդիտի պլանավորման և ստուգումների բնույթի, ժամկետների և խորության որոշման նպատակով ձեռք բերել ներքին վերահսկողության վերաբերյալ բավարար պատկերացում,
2. համակցված ռիսկի որոշման նպատակով ներհատուկ և վերահսկողության ռիսկերի գնահատում,
3. ռիսկերի գնահատումների ամփոփում,
4. վերահսկողական միջավայրի, հաշվապահական հաշվառման համակարգի պատշաճության և վերահսկողության ընթացակարգերի գնահատում, ներառյալ այն քաղաքականությունները և ընթացակարգերը, որոնք վերաբերում են ֆոնդերի օգտագործման հաշվետվության հոդվածների վերաբերյալ ֆինանսական տվյալների գրանցումների, մշակման, ամփոփման և ներկայացման Կազմակերպության կարողություններին: Ներքին վերահսկողության գնահատումը ներառում է.
   - Կազմակերպության և նրա գործունեության առանձին ուղղությունների մակարդակով ներքին վերահսկողական միջավայրի ըմբռնում և փաստաթղթավորում,
   - Երկու մակարդակներում գտնվող առանձին գործընթացների նկատմամբ ներքին վերահսկողության արդյունավետության գնահատում,
   - Էական ցիկլերի համար քայլ-առ-քայլ ստուգումների կատարման և հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով վերահսկողական մեխանիզմների արդյունավետության գնահատում:

Այս գնահատումը ներառել է, ի թիվս այլոց, վերահսկողության համակարգերը հետևյալ ոլորտներում.

ա. ծրագրային ծախսերի պատշաճության և դրանց հիմնավորվածության ապահովում,

բ. կանխիկի և բանկային հաշիվների տնօրինում,

գ. ապրանքների և ծառայությունների գնումներ,

դ. պաշարների կառավարում,

ե. անձնակազմին առնչվող այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են աշխատաժամանակի հաշվառումը, աշխատավարձերը և օժանդակ հատուցումները,

զ. այնպիսի ակտիվների տնօրինում և օտարում, ինչպիսիք են փոխադրամիջոցները, սարքավորումները, գործիքները և այլ ակտիվներ, որոնք ձեռք են բերվել կա՛մ Կազմակերպության կողմից տնօրինվող ԱՄՆ ՄԶԳ միջոցներով, կա՛մ ուղղակիորեն ԱՄՆ ՄԶԳ կողմից,

է. Համագործակցության համաձայնագրի և գործող իրավական ակտերի այն դրույթների պահանջներին համապատասխանության ապահովում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆոնդերի օգտագործման հաշվետվության վրա:

5. ծախսերի համաֆինանսավորման պահանջներին համապատասխանություն ապահովելու նկատմամբ ներքին վերահսկողության գնահատում, ներառյալ ներդրումների տրամադրումը և կատարված ներդրումների կառավարումը:

դ. Համագործակցության համաձայնագրի դրույթներին և գործող իրավական ակտերին համապատասխանության գծով մեր աշխատանքների շրջանակները ներառել են հետևյալ ստուգումները և ընթացակարգերը.

1. Համագործակցության համաձայնագրի դրույթների ու գործող իրավական ակտերի, ինչպես նաև Կազմակերպությանը և դրա գործունեության կազմակերպմանը և կարգավորմանը առնչվող այնպիսի փաստաթղթերի ուսումնասիրություն, ինչպիսիք են հաշվապահական հաշվառման և վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը, հետևյալ նպատակներով. (ա) համաձայնագրերով և այլ փաստաթղթերով սահմանված պահանջների բացահայտում, և (բ) այնպիսի ընթացակարգերի ի հայտ բերում, որոնց պահանջների ապահովման բացակայությունը կարող է ուղղակի և էական ազդեցություն ունենալ ֆոնդերի օգտագործման հաշվետվության վրա:

2. Վերոհիշյալ պահանջներին Կազմակերպության համապատասխանության ստուգում: Ստուգման ենթարկված ոլորտները հետևյալն են՝

   ա. վճարումների համապատասխանությունը Համագործակցության համաձայնագրին և գործող իրավական ակտերին,

   բ. ոչ պատշաճ ծախսերի կատարումը, ֆոնդերի օգտագործումն անթույլատրելի նպատակների համար,

   գ. ձեռքբերված ակտիվների առկայությունը, համապատասխան գույքային նշումը և պատշաճ օգտագործումը,

   դ. ձեռքբերված տեխնիկական օժանդակության և ծառայությունների պատշաճ օգտագործումը,

   ե. անհրաժեշտության դեպքում համաֆինանսավորման միջոցների գումարների հաշվարկները և դրանց հաշվառումը,

գ. նման պահանջի առկայության դեպքում՝ ծախսերի համաֆինանսավորման միջոցների ապահովումը՝ համաձայն Համագործակցության համաձայնագրի պահանջների, և պահանջվող գումարների հետ տարբերության քանակական գնահատումը,

է. ծառայություններ և հատուցումներ ստացող անձանց իրավունակությունն այդ ծառայությունների և հատուցումների ստացման համար,

ը. Կազմակերպության ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների, կանխավճարների և հատկացման հայտերի հիմնավորվածությունը հաշվապահական մատյաններով և գրանցումներով,

թ. Տոկոսային հաշիվներում ԱՄՆ ՄԶԳ միջոցների կանխավճարների ավանդը և այդ կանխավճարների գծով ձեռքբերված տոկոսի զեղչումը ԱՄՆ ՄԶԳ-ին՝ բացառությամբ տարեկան մինչև 250 ԱՄՆ դոլարի, որ Հիմնադրամը կարող էր պահած լինել վարչական ծախսերի համար:

ե. Մենք վերանայել ենք Գրանթ Թորնթոնի կողմից իր հաշվետվություններում 2013թ. սեպտեմբերի 6-ին ԱՄՆ ՄԶԳ ռեսուրսների՝ ՀԵԻԱ կողմից ղեկավարվող ֆինանսական աուդիտի վերաբերյալ տրամադրված առաջարկությունների իրականացման կարգավիճակը՝ համաձայն թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության Համաձայնագրի՝ 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

### Շրջանակի սահմանափակումներ

Մենք չունենք *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 3-ի 3.76 պարբերության դրույթներին ամբողջությամբ համապատասխանող շարունակական մասնագիտական կրթության ծրագիր, քանի որ առաքելության պլանավորման, ղեկավարման, աշխատանքների իրականացման և հաշվետվության պատրաստման մեջ ներգրավված ոչ բոլոր աուդիտորներն են ստացել պետական աուդիտի, պետական միջավայրի կամ աուդիտի ենթակա կազմակերպության յուրահատուկ միջավայրի վերաբերյալ նվազագույնը 24 ժամ մասնագիտական ուսուցում 2 տարվա ընթացքում: Մենք հավատացած ենք, որ *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* նշված պահանջի չապահովման հետևանքն էական չէ, քանի որ մեր ընթացիկ ծրագիրն ապահովում է շարունակական մասնագիտական ուսուցում և վերապատրաստում՝ 120 ժամ յուրաքանչյուր երեք տարվա համար: Մենք կատարում ենք համապատասխան քայլեր՝ նշված պահանջին ամբողջովին բավարարող շարունակական մասնագիտական ուսուցման ծրագիր ներդնելու ուղղությամբ:

Մեր ընկերությունում չի իրականացվել անկախ աուդիտորական կազմակերպության կողմից որակի վերահսկողության արտաքին ուսումնասիրություն, ինչպիսին պահանջվում է *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 3-ի 3.82(բ) պարբերությունում, քանի որ Հայաստանում գործող մասնագիտական կազմակերպությունների կողմից նման ծրագիր չի առաջարկվում: Մենք հավատացած ենք, որ *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* նշված պահանջի չապահովման հետևանքն էական չէ, քանի որ մենք մասնակցում ենք Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի որակի վերահսկողության ներքին ստուգումների համաշխարհային ծրագրին, որի շրջանակներում մեր ընկերությունը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ենթարկվում է որակի վերահսկողության ընդգրկուն ստուգումների Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի այլ անդամ ընկերությունների բաժնետերերի և առաքելության ղեկավարների կողմից:

## Աուդիտի արդյունքների ամփոփում

Ստորև ներկայացված է ֆոնդերի օգտագործման հաշվետվության, ներքին վերահսկողության և Համագործակցության համաձայնագրի և գործող իրավական ակտերի դրույթներին համապատասխանության վերաբերյալ աուդիտի արդյունքների ամփոփ նկարագրությունը:

### Ֆոնդերի օգտագործման հաշվետվություն

Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը բոլոր էական առումներով տալիս է 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում Ծրագրի համար ստացված և օգտագործված ֆոնդերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Համագործակցության համաձայնագրի դրույթների և ֆոնդերի օգտագործման հաշվետվության ծանոթագրություն 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման սկզբունքի:

### Ներքին վերահսկողություն

Մեր կողմից որևէ ներքին վերահսկողության թերություն չի բացահայտվել:

### Համապատասխանություն

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում մենք չենք հայտնաբերել որևէ էական անհամապատասխանություն, որի վերաբերյալ անհրաժեշտ կլիներ տեղեկացնել, ինչպես պահանջվում է ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտներով:

### Նախորդ աուդիտի առաջարկությունների իրականացում

Համաձայն *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 4-ի *«Նախորդ աուդիտների արդյունքների դիտարկում»* բաժնի՝ մենք պարտավոր ենք հաշվի առնել նախորդ աուդիտների արդյունքները և տեղեկանալ բացահայտված այն նշանակալի թերությունների և ներկայացված առաջարկությունների իրականացման կարգավիճակի վերաբերյալ, որոնք ուղղակիորեն կապված են աուդիտի նպատակների հետ:

Մեր կողմից իրականացվող աուդիտի շրջանակներում մենք նաև վերանայել ենք «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրի՝ 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական աուդիտի արդյունքում Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ 2013թ. սեպտեմբերի 6-ին թվագրված դիտարկումների ու առաջարկությունների իրականացման կարգավիճակը:

### Առաջարկությունն իրականացվել է: Ենթադրամաշնորհային պայմանագրերի ներքո հատկացված ֆոնդերի նկատմամբ ներքին վերահսկողություն

Ծրագրի գործընկեր կազմակերպություններից (ԱԶԿ և Գեղարքունիքի մարզի ԱԱՊ) չի պահանջվել ամսեկան ֆինանսական հաշվետվությունների հետ մեկտեղ ներկայացնել բանկային հաշիվների քաղվածքներ, որոնք ցույց կտային համապատասխան ենթադրամաշնորհային պայմանագրի ներքո ստացված ֆոնդերի համար բացված հատուկ առանձին բանկային հաշիվների շարժերը և մնացորդները: Ամսեկան հաշվետվությունները ստուգելիս և հաստատելիս՝ ՀԵԻԱ-ի կողմից բանկային հաշիվների համադրումներ չեն իրականացվում: Ենթադրամաշնորհ ստացած կազմակերպությունների ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների

ստուգումներն իրականացվում են ՀԵԻԱ-ի՝ Երևանում տեղակայված գլխավոր գրասենյակում և հիմնված են այդ կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերի պատճենների վրա:

Մենք առաջարկել էինք, որպեսզի ՀԵԻԱ-ն ներդնի հետևյալ լրացուցիչ միջոցառումները, որոնք ուղղված կլինեն Ենթադրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում գործընկեր կազմակերպություններին հատկացված ֆոնդերի նկատմամբ ներքին վերահսկողության ամրապնդմանը.

- ֆինանսական հաշվետվությունների համադրում համապատասխան բանկային հաշիվների քաղվածքների հետ,
- կանոնավոր ստուգայցեր՝ Ծրագրի գործընկեր կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման գործառույթների ստուգման համար, ներառյալ հիմնավորող փաստաթղթերի ստուգում, դրամարկղի ստուգում, և այլն: Նման ստուգայցերի արդյունքները պետք է փաստաթղթավորվեն, և առաջարկությունների իրականացումը պետք է ստուգվի հաջորդ այցերի ընթացքում:

Առաջարկությունը կատարվել է, մասնավորապես՝

- Սկսած 2013թ.-ի սեպտեմբեր ամսվանից՝ ֆինանսական հաշվետվությունները համադրվել են համապատասխան բանկային հաշիվների քաղվածքների հետ,
- Սկսած 2013թ.-ի օգոստոս ամսվանից՝ կատարվել են կանոնավոր ստուգայցեր՝ Ծրագրի գործընկեր կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման գործառույթների ստուգման համար՝ ներառյալ հիմնավորող փաստաթղթերի ստուգում, դրամարկղի ստուգում և այլն: Նման ստուգայցերի արդյունքները պետք է փաստաթղթավորվեն, և առաջարկությունների իրականացումը պետք է ստուգվի հաջորդ այցերի ընթացքում:

## Առաջարկությունն իրականացվել է: Ֆոնդերի աղբյուրների և օգտագործման նկատմամբ ներքին վերահսկողություն

Ծրագրի իրականացման ընթացքում Արմավիրի զարգացման կենտրոնն (ԱԶԿ) օգտագործել է որոշ այլ ֆինանսավորման աղբյուրներից ստացված ֆոնդերն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Ծրագրի ծախսերը հոգալու համար՝ ելնելով մի շարք պատճառներից՝ այլ աղբյուրներից ստացված զգալի կանխիկ միջոցների առկայությունը դրամարկղում, պահանջված գումարի բացակայությունն ԱՄՆ ՄԶԳ ֆոնդերի համար հատկացված առանձին բանկային հաշվում: Նմանատիպ փոխառությունները ոչ-ծրագրային աղբյուրներից այնուհետև վերադարձվել են Կազմակերպության նորմալ գործառնությունների ընթացքում՝ Ծրագրի համար նախատեսված առանձին հաշվից ոչ-ծրագրային ծախսերի վճարման միջոցով:

Արդյունքում Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները որոշ դեպքերում ներառում են ծախսեր, որոնք վճարվել են ոչ Ծրագրի առանձին բանկային հաշվից, իսկ բանկային հաշվի շարժը ներառում է Ծրագրին չվերաբերող վճարումներ՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առաջացնելով տարբերություններ ֆոնդերի և դրամական միջոցների միջև: Միևնույն ժամանակ, Կազմակերպության կողմից նման միջծրագրային փոխառությունների վերաբերյալ չեն պահվել մանրամասն գրառումներ, ինչն ավելի է բարդացնում ֆոնդերի և դրամական միջոցների մնացորդների համադրումը:

Մենք առաջարկել էինք, որպեսզի կազմակերպությունը կարգավորի ֆոնդերի ստացման աղբյուրները և դրանց օգտագործումը՝ Ծրագրին առնչվող գործարքները սահմանափակելով հատուկ այդ նպատակով առանձնացված բանկային հաշվով: Ի լրումն, մենք առաջարկում ենք, որ այն բացառիկ դեպքերում, երբ Կազմակերպությանն

անհրաժեշտ կլինի կատարել կարճաժամկետ փոխառություն ֆինանսավորման տարբեր աղբյուրների միջև, նման փոխանցումների վերաբերյալ կատարվեն մանրամասն գրառումներ, որոնք ցույց կտան օգտագործման նպատակը, դրանց անհրաժեշտ թույլտվությունը, իսկ փոխառությունների վերադարձը կատարվի մեկ գումարով՝ տարբեր ոչ-ծրագրային ծախսեր ծրագրային բանկային հաշվից վճարելու փոխարեն:

2013թ.-ի սեպտեմբեր ամսվանից սկսած՝ առաջարկությունն իրականացվել է:

### Առաջարկությունը չի իրականացվել: Գեղարքունիքի մարզի ԱԱՊ կողմից հաշվապահական ծրագրի կիրառումը

Գեղարքունիքի մարզի ԱԱՊ-ն Ծրագրի հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար չի օգտագործում հաշվապահական ծրագիր: ՀԵԻԱ-ի հետ կնքված ենթադրամաշնորհային պայմանագրի շրջանակներում ստացված միջոցների հաշվառման համար օգտագործվում է MS Excel ծրագիրը՝ հիմնվելով ենթադրամաշնորհի առանձին բանկային հաշվի քաղվածքների վրա:

Մենք առաջարկել էինք, որպեսզի Գեղարքունիքի մարզի ԱԱՊ ղեկավարությունը դիտարկի կրկնակի գրանցման սկզբունքով գործող որևէ հաշվապահական ծրագրի կիրառումը հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Հաշվապահական ծրագրի կիրառումը կամրապնդի ներքին վերահսկողությունը՝ նվազեցնելով անճշտությունների և տվյալների կորստի ռիսկը, ինչը զգալիորեն ավելի բարձր է MS Excel ծրագրում, որը չունի անհրաժեշտ գործիքներ:

Առաջարկությունը չի իրականացվել:

### Առաջարկությունն իրականացվել է: Համաֆինանսավորման ներդրումների արտացոլումը ԱՄՆ ՄԶԳ-ին ներկայացված հաշվետվություններում

ՀԵԻԱ-ի կողմից 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում տրամադրված համաֆինանսավորման ներդրումները չեն ներառվել ԱՄՆ ՄԶԳ-ին ՀԵԻԱ-ի կողմից ներկայացված ամսեկան հաշվետվություններում:

Մենք առաջարկել էինք, որպեսզի ՀԵԻԱ ղեկավարությունը ճշգրտի ԱՄՆ ՄԶԳ-ին ներկայացված ֆինանսական հաշվետվությունները և ներառի մինչև ճշգրտված հաշվետվության ամսաթիվը փաստացի տրամադրված համաֆինանսավորման ներդրումների ընդհանուր գումարը՝ հիմնվելով ներդրումների վերաբերյալ վարվող հաշվապահական հաշվառման տվյալների վրա, և այնուհետ շարունակել կատարած համաֆինանսավորման վերաբերյալ տվյալները ներառել հաշվետվություններում յուրաքանչյուր ամիս:

2013թ.-ի օգոստոս ամսվանից սկսած՝ առաջարկությունն իրականացվել է:

### Առաջարկությունն իրականացվել է: Տպագիր նյութերի և հրատարակումների հաշվառումը

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ ստացած կազմակերպությունները (Արմավիրի զարգացման կենտրոն և Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ) չունեն փաստաթղթավորված ներքին վերահսկողական ընթացակարգեր՝

իրատարակումների և տպագիր նյութերի ստացման և օգտագործման վերաբերյալ: Պատվիրված նյութերի ստացումը և բաշխումը չի փաստաթղթավորվում՝ քանակները և օգտագործման նպատակները գրանցելու նպատակով:

Մենք առաջարկել էինք, որպեսզի գործընկեր կազմակերպությունները մշակեն և իրականացնեն փաստաթղթավորված ներքին վերահսկողական ընթացակարգեր՝ իրատարակումների և տպագիր նյութերի ստացման և օգտագործման վերաբերյալ, Ծրագրի շրջանակներում դրանց օգտագործման թույլատրելիությունը հիմնավորելու և տպագրության գծով Ծրագրի միջոցների ծախսման արդյունավետությունը վերահսկելու համար:

2013թ.-ի սեպտեմբեր ամսվանից սկսած առաջարկությունն իրականացվել է:

## Խնդրահարույց ծախսեր

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքում խնդրահարույց հանդիսացող այնպիսի ծախսեր չեն հայտնաբերվել, ինչպիսիք են (ա) անթույլատրելի ծախսեր, որոնք իրենց հիմնավորված չլինելու պատճառով ակնհայտորեն խնդրահարույց ծախսեր են հանդիսանում, Համագործակցության համաձայնագրի և գործող իրավական ակտերի շրջանակներում արգելված են կամ ծրագրի հետ առնչություն չունեն և (բ) չհիմնավորված ծախսեր, որոնք համապատասխան փաստաթղթերով հիմնավորված չեն կամ դրանց կատարման համար նախօրոք համաձայնություն կամ թույլտվություն ձեռք չի բերվել:

## Անուղղակի ծախսերի դրույքներ

Աուդիտի շրջանակները չեն ներառում անուղղակի ծախսերի դրույքների ուսումնասիրություն, քանի որ Կազմակերպությունը չունի ԱՄՆ ՄԶԳ կողմից հաստատված անուղղակի ծախսերի դրույք:

## Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվություն

Դիտարկման արդյունքում մենք չհայտնաբերեցինք որևէ բան, որը կստիպեր մեզ ենթադրել, որ Կազմակերպությունը բոլոր էական առումներով ճշմարիտ չի ներկայացրել 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը՝ ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման սկզբունքի համաձայն:

## Աուդիտի արդյունքների վերաբերյալ ղեկավարության արձագանքը

ՀԵԻԱ-ի ղեկավարությունը համաձայն է աուդիտի արդյունքների և դիտարկումների հետ:

Grant Thornton

ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002
Համագործակցության համաձայնագրի շրջանակներում
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի
ամփոփիչ ֆինանսական աուդիտ

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած
ժամանակաշրջանի համար

Ֆոնդերի օգտագործման հաշվետվություն և
Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961
www.grantthornton.am

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի վարչությանը
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 7, բն. 2

Մեր կողմից իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (Կազմակերպություն) կողմից իրականացվող «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի (Ծրագիր) 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆոնդերի օգտագործման հաշվետվության աուդիտ: Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆոնդերի օգտագործման հաշվետվության պատրաստման համար: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ:

Բացառությամբ հաջորդ պարբերություններում նկարագրվածի, մենք աուդիտն անցկացրեցինք ԱՄՆ Գլխավոր վերահսկիչի կողմից հաստատված *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ, որ ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը զերծ է էական խեղաթյուրումներից: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆոնդերի օգտագործման հաշվետվությունում արտացոլված գումարները և բացահայտումները հիմնավորող փաստերի ստուգում ընտրանքային կարգով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, Կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ իրականացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մենք չունենք *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 3-ի 3.76 պարբերության դրույթներին ամբողջությամբ համապատասխանող շարունակական մասնագիտական կրթության ծրագիր, քանի որ առաքելության պլանավորման, ղեկավարման, աշխատանքների իրականացման և հաշվետվության պատրաստման մեջ ներգրավված ոչ բոլոր աուդիտորներն են ստացել պետական աուդիտի, պետական միջավայրի կամ աուդիտի ենթակա կազմակերպության յուրահատուկ միջավայրի վերաբերյալ նվազագույնը 24 ժամ մասնագիտական ուսուցում 2 տարվա ընթացքում: Մենք հավատացած ենք, որ *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* նշված պահանջի չապահովման հետևանքն էական չէ, քանի որ մեր ընթացիկ ծրագիրն ապահովում է շարունակական մասնագիտական ուսուցում և վերապատրաստում՝ 120 ժամ յուրաքանչյուր երեք տարվա համար: Մենք կատարում ենք համապատասխան քայլեր՝ նշված պահանջին ամբողջովին բավարարող շարունակական մասնագիտական ուսուցման ծրագիր ներդնելու ուղղությամբ:

Մեր ընկերությունում չի իրականացվել անկախ աուդիտորական կազմակերպության կողմից որակի վերահսկողության արտաքին ուսումնասիրություն, ինչպիսին պահանջվում է *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* Գլուխ 3-ի 3.82(բ) պարբերությունում, քանի որ Հայաստանում գործող մասնագիտական կազմակերպությունների կողմից նման ծրագիր չի առաջարկվում: Մենք հավատացած ենք, որ *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* նշված պահանջի չապահովման հետևանքն էական չէ, քանի որ մենք մասնակցում ենք Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի որակի վերահսկողության ներքին ստուգումների համաշխարհային ծրագրին, որի շրջանակներում մեր ընկերությունը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ենթարկվում է որակի վերահսկողության ընդգրկուն ստուգումների Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի այլ անդամ ընկերությունների բաժնետերերի և առաքելության ղեկավարների կողմից:

Մեր կարծիքով, վերոհիշյալ ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում Ծրագրի համար ստացված և օգտագործված ֆոնդերը՝ համաձայն Համագործակցության համաձայնագրի դրույթների և ֆոնդերի օգտագործման հաշվետվության 2-րդ ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման սկզբունքի:

Համաձայն *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների*՝ մենք 2014թ. օգոստոսի 28-ին հաշվետվություններ ենք ներկայացրել նաև Կազմակերպության՝ ֆինանսական հաշվետվություններին առնչվող ներքին վերահսկողության համակարգի, ինչպես նաև համաձայնագրի դրույթներին և կիրառելի իրավական ակտերին համապատասխանության մեր ստուգումների վերաբերյալ: Վերը նշված հաշվետվությունները հանդիսանում են *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* համաձայն անցկացրած աուդիտի բաղկացուցիչ մաս և մեր աուդիտի արդյունքները դիտարկելիս պետք է ընթերցվեն սույն անկախ աուդիտորի եզրակացության հետ մեկտեղ:

Սույն հաշվետվությունը նախատեսված է Կազմակերպության և ԱՄՆ ՄԶԳ համար: Այնուամենայնիվ, ԱՄՆ ՄԶԳ կողմից հրապարակումից հետո սույն հաշվետվությունը դառնում է հանրամատչելի և դրա տարածումը չի սահմանափակվում:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Երևան, 28 օգոստոսի 2014թ.

Էմիլ Վասիլյան
Առաքելության ղեկավար

# Ֆոնդերի օգտագործման հաշվետվություն

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

| ԱՄՆ դոլար | | | Խնդրահարույց ծախսեր | | |
|---|---|---|---|---|---|
| | Ընդհանուր բյուջե | Փաստացի ծախսեր տարվա ընթացքում | Անթույլատրելի | Չհիմնավորված | Ծան. |
| **ԵԿԱՄՈՒՏ** | | | | | |
| ԱՄՆ ՄԶԳ-ից ստացված ֆոնդեր | 1,450,409 | 676,703 | | | |
| | 1,450,409 | 676,703 | | | |
| **ԾԱԽՍԵՐ** | | | | | |
| Աշխատակազմ | 1,015,028 | 471,106 | | | |
| Այլ ուղղակի ծախսեր | 435,381 | 171,760 | | | 3 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | 1,450,409 | 642,866 | | | |
| **ՖՈՆԴԵՐԻ ԶՈՒՏ ՆՎԱԶՈՒՄ** | | 33,837 | | | |
| **ՖՈՆԴԵՐԻ ՄՆԱՑՈՐԴ** | | | | | |
| Մնացորդ տարվա սկզբում | | 12,073 | | | 4 |
| **Մնացորդ տարվա վերջում** | | 45,910 | | | 4 |

*Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը ստորագրվել է Կազմակերպության ղեկավարության կողմից 2014թ. օգոստոսի 28-ին: Սույն հաշվետվության 22-28 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆոնդերի օգտագործման հաշվետվության բաղկացուցիչ մասը:*

*Կարեն Զադոյան*
Նախագահ

*Այվարդ Հովհաննիսյան*
Գլխավոր հաշվապահ

# Ֆոնդերի օգտագործման հաշվետվությանը կից ծանոթագրություններ

*2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլարով*

## 1 Ընդհանուր նկարագրություն

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ն (ՀԵԻԱ, Կազմակերպություն) հիմնադրվել է 1995թ., ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ արդարադատության նախարարությունում որպես հասարակական կազմակերպություն գրանցվել է 1995թ. մարտի 14-ին: ՀԵԻԱ-ի ստեղծման հիմնական նպատակն էր՝ համախմբել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն: 1999թ.-ից սկսած՝ Կազմակերպությունն ընդլայնել է իր գործունեությունը՝ մարզային գրասենյակներ հիմնադրելով Վանաձորում, Գավառում, Գյումրիում, Կապանում, Գորիսում և Իջևանում:

ՀԵԻԱ-ի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Նալբանդյան փ. 7, բն. 2:

2011թ. սեպտեմբերի 12-ին կնքված թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) ՀԵԻԱ-ին տրամադրել է 599,976 ԱՄՆ դոլար գումարի չնորհ՝ «Աջակցություն շահերի պաշտպանության ազգային կենտրոնների ցանցին» ծրագրի իրականացման համար: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանվել 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. հուլիսի 31-ը, որը Համաձայնագրի՝ հուլիսի 23-ին կնքված 3-րդ փոփոխությամբ երկարաձգվել է մինչև 2012թ. օգոստոսի 21-ը:

Համաձայնագրի՝ 2014թ. հունվարի 21-ի 9-րդ փոփոխությամբ՝

- 2015թ. օգոստոսի 20-ը, որը սահմանված էր որպես Ծրագրի ավարտ, փոփոխվել է 2014թ. հունվարի 31-ը,
- Ծրագրի ընդհանուր բյուջեն նվազեցվել է 949,567 ԱՄՆ դոլարով՝ կազմելով 1,450,409 ԱՄՆ դոլար՝ 2,399,976 ԱՄՆ դոլարի փոխարեն,
- 2-րդ տարվա համար նախատեսված Ծրագրի գործունեության փոփոխություն, որը կարտացոլի գործունեության իրականացման վերանայված ժամկետը և ծախսերի կրճատումը:

Ծրագրի փոփոխված բյուջեն ներկայացված է ստորև.

| ԱՄՆ դոլար | ԱՄՆ ՄԶԳ | Համաֆինան-սավորում | Ընդամենը |
|---|---|---|---|
| Աշխատակազմ | 1,015,028 | - | 1,015,028 |
| Այլ ուղղակի ծախսեր | 435,381 | 53,600 | 488,981 |
| | 1,450,409 | 53,600 | 1,504,009 |

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ ՀԵԻԱ-ն կամրապնդի հակակոռուպցիոն կենտրոնների ցանցը, որը բաղկացած է 11 կենտրոններից Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Հակակոռուպցիոն կենտրոնները գործարկվում են հետևյալ երեք հասարակական կազմակերպությունների կողմից.

- Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ԱԶԿ), որը գործարկում է Երևանի, ՀՀ Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի հակակոռուպցիոն կենտրոնները.
- Արմավիրի զարգացման կենտրոնը, որը գործարկում է Արմավիրի հակակոռուպցիոն կենտրոնը. ԱԶԿ-ի և ՀԵԻԱ-ի միջև ենթադրամաշնորհի պայմանագրի ներքո.
- Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը (ԳՄԱՊ), որը գործարկում է Գեղարքունիքի հակակոռուպցիոն կենտրոնը, ԳՄԱՊ-ի և ՀԵԻԱ-ի միջև ենթադրամաշնորհի պայմանագրի ներքո:

Հակակոռուպցիոն կենտրոնները իրենց գործունեությունն իրականացնում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1 Օրական կտրվածքով անվճար իրավաբանական ծառայությունների մատուցում՝ քաղաքացիների հակակոռուպցիոն բողոքներին արձագանքելու նպատակով.

   ա. կոռուպցիայի հետ կապված իրենց իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ քաղաքացիներին իրավաբանական խորհրդատվության տրամադրում

   բ. այդ գործերի հիման վրա կենտրոնների իրավախորհրդատուների կողմից մշակվում են դիմում-բողոքներ, հայցադիմումներ և կոնկրետ գործընթացին վերաբերող իրավական այլ փաստաթղթեր

   գ. քաղաքացիներին ցուցաբերվում է աջակցություն իրենց դիմում-բողոքները համապատասխան իրավական մարմիններ ներկայացնելու հարցում, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովվում է հետագա աջակցությունը

   դ. կենտրոններին դիմած քաղաքացիներին տրամադրում է անվճար փաստաբանական ծառայություն դատարանում՝ քաղաքացիական, վարչական և քրեական գործերով, ինչպես նաև պետական, տեղական, իրավապահ, հանրային մարմիններում:

2 Հակակոռուպցիոն և ընթացակարգային բարեփոխումների իրականացում.

Հակակոռուպցիոն կենտրոններ ներկայացված դիմում-բողոքների վերլուծության հիման վրա ծրագրի թիրախ հանդիսացող մարզերում կենտրոնների կողմից իրականացվում են կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային բարեփոխումներին ուղղված գործողություններ օրենսդրության ուսումնասիրությունների կատարման, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների նախագծերի պատրաստման, առաջարկությունների ներկայացման և քննարկումների անցկացման միջոցով:

3 Հակակոռուպցիոն իրազեկության և կրթության ռազմավարություն.

Կոռուպցիայի վերաբերյալ հասարակության ընկալումը բարձրացնելու և հակակոռուպցիոն վարքագիծ ձևավորելու, կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականություն ցուցաբերելու նպատակով ծրագրի թիրախ հանդիսացող մարզերում իրականացվում են հանրային իրազեկման քարոզարշավներ՝ հիմք ընդունելով թիրախ հանդիսացող մարզերի աշխարհագրական առանձնահատկությունները, Երևանից մարզերի հեռավորությունը, մարզերի աղքատության մակարդակը, մարզերի կոռուպցիոն ռիսկերի մակարդակը և այլն գործոններ:

### Ենթադրամաշնորհային պայմանագրեր

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհային պայմանագրեր են ստորագրվել երկու գործընկեր կազմակերպությունների հետ՝ Հայաստանի երկու մարզերում Ծրագրի իրականացման համար:

#### Արմավիրի զարգացման կենտրոն

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն հիմնադրվել է 2005թ. ապրիլի 29-ին: ՀԿ-ի առաքելությունն է՝ «Համագործակցություն հանուն սոցիալ-տնտեսական առաջընթացի», խնդիր դնելով նպաստել մարզի պետական, հասարակական և գործարար սեկտորների համագործակցությանը: Հասարակական կազմակերպության ռազմավարական նպատակներն են՝

- Ժողովրդավարական կառավարման թափանցիկ և պատասխանատու համակարգի ամրապնդումն ու բարելավումը,
- Աջակցություն քաղաքացիական հասարակությանը,
- Կայուն սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովում:

ԱԶԿ-ի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հունան Ավետիսյանի փ. 39ա:

Ծրագրի շրջանակներում 2011թ. սեպտեմբերի 22-ին ՀԵԻԱ և ԱԶԿ միջև կնքվել է թիվ 2011-01-ADC ենթադրամաշնորհային պայմանագիրը, որով 25,415,000 ՀՀ դրամ (մոտ 63,540 ԱՄՆ դոլար) է տրամադրվել ՀՀ Արմավիր մարզի Արմավիր քաղաքի հակակոռուպցիոն կենտրոնի գործարկման համար 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. հուլիսի 31-ը ժամանակաշրջանում: ՀԵԻԱ և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքված Համագործակցության համաձայնագրի 3-րդ փոփոխությանը զուգահեռ, համաձայն որի Ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2012թ. օգոստոսի 21-ը, ենթադրամաշնորհային պայմանագիրը համապատասխանաբար փոփոխվեց 2012թ. օգոստոսի 1-ին, որով՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2012թ. օգոստոսի 21-ը,

- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 26,790,217 ՀՀ դրամ (մոտ 66,980 ԱՄՆ դոլար):

ՀԵԻԱ և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքված Համագործակցության համաձայնագրի 4-րդ փոփոխությանը զուգահեռ, համաձայն որի Ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2015թ. օգոստոսի 20-ը, ենթադրամաշնորհային պայմանագիրը համապատասխանաբար փոփոխվեց 2012թ. օգոստոսի 21-ին, որով՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2013թ. օգոստոսի 21-ը,
- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 54,428,217 ՀՀ դրամ (մոտ 136,070 ԱՄՆ դոլար):

Համաձայն 2013թ. օգոստոսի 21-ի ենթադրամաշնորհային պայմանագրի լրացմանը՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2014թ. հունվարի 31-ը,
- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 65,801,077 ՀՀ դրամ (մոտ 164,503 ԱՄՆ դոլար):

**Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ**

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատը (Գեղարքունիքի մարզի ԱԱՊ) հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2002թ. ապրիլին: Գեղարքունիքի մարզի ԱԱՊ-ի առաքելությունն է՝ աջակցել Գեղարքունիքի մարզի գործարար համայնքի ձևավորմանը և միավորել ձեռնարկատերերին ընդհանուր շահերի և հեռանկարների շուրջ: Կազմակերպության անդամ են մոտ 300 ձեռնարկություն:

Գեղարքունիքի մարզի ԱԱՊ գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բոռնազյան փ. 2:

Ծրագրի շրջանակներում 2011թ. սեպտեմբերի 22-ին ՀԵԻԱ և Գեղարքունիքի մարզի ԱԱՊ միջև կնքվել է թիվ 2011-02-GCCI ենթադրամաշնորհային պայմանագիրը, որով 17,376,400 ՀՀ դրամ (մոտ 43,440 ԱՄՆ դոլար) է տրամադրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի հակակոռուպցիոն կենտրոնի գործարկման համար՝ 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2012թ. հուլիսի 31-ը ժամանակաշրջանում: ՀԵԻԱ և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքված Համագործակցության համաձայնագրի 3-րդ փոփոխությանը զուգահեռ, համաձայն որի Ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2012թ. օգոստոսի 21-ը, ենթադրամաշնորհային պայմանագիրը համապատասխանաբար փոփոխվեց 2012թ. օգոստոսի 1-ին, որով՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2012թ. օգոստոսի 21-ը,
- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 18,078,400 ՀՀ դրամ (մոտ 45,200 ԱՄՆ դոլար):

ՀԵԻԱ և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքված Համագործակցության համաձայնագրի 4-րդ փոփոխությանը զուգահեռ, համաձայն որի Ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2015թ. օգոստոսի 20-ը, ենթադրամաշնորհային պայմանագիրը համապատասխանաբար փոփոխվեց 2012թ. օգոստոսի 21-ին, որով՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2013թ. օգոստոսի 21-ը,
- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 37,205,204 ՀՀ դրամ (մոտ 93,010 ԱՄՆ դոլար):

Համաձայն 2013թ. օգոստոսի 21-ի ենթադրամաշնորհային պայմանագրի լրացմանը՝

- պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2014թ. հունվարի 31-ը,
- պայմանագրի բյուջեն ավելացվեց մինչև 44,078,317 ՀՀ դրամ (մոտ 110,196 ԱՄՆ դոլար):

## 2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### ա. Պատրաստման հիմունքները

Ծրագրի հաշվապահական հաշվառումը Կազմակերպության կողմից վարվել է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով: Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով: Այս սկզբունքի համաձայն եկամուտը ճանաչվում է ստացման, այլ ոչ թե այն վաստակելու ժամանակ, և ծախսերը ճանաչվում են վճարման, այլ ոչ թե դրանց կատարման ժամանակ:

### բ. Գործառնական և ներկայացման արժույթ

Ծրագրի գործառնական արժույթներն են ԱՄՆ դոլարը և ՀՀ դրամը:

Ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով:

### գ. Արտարժույթ

Եկամուտը ստացվում է ԱՄՆ դոլարով և փոխարկվում է ՀՀ դրամի՝ կիրառելով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ փոխարկման օրվա առևտրային փոխարժեքը:

Ծախսերը հաշվառվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով հաշվառված ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ կիրառելով այն փոխարժեքը, որով ստացված ֆինանսավորումը ԱՄՆ դոլարից փոխարկվել է ՀՀ դրամի:

### դ. Եկամուտ

Եկամուտը բաղկացած է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Ծրագրի առանձին բանկային հաշվին ԱՄՆ դոլարով փոխանցված հատկացումներից՝ համաձայն Համագործակցության համաձայնագրում նկարագրված ընթացակարգերի:

### ե. Ծախսեր

Ծախսերը ներառում են՝

- Համագործակցության համաձայնագրով նախատեսված Ծրագրի գործունեության իրականացման նպատակով ՀԵԻԱ կողմից կատարված վճարումները,
- Ծրագրի գործընկեր կազմակերպությունների՝ ԱԶԿ և Գեղարքունիքի մարզի ԱԱՊ կողմից կատարված վճարումները՝ համապատասխան ենթադրամաշնորհային պայմանագրերի համաձայն ՀԵԻԱ-ից ստացված կանխավճարների հաշվին:

### զ. Դրամական միջոցներ

Ծրագրի դրամական միջոցները կազմված են՝

- ՀԵԻԱ-ի՝ Ծրագրի առանձին հաշիվների մնացորդներից՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով,
- Ծրագրի գործընկեր կազմակերպությունների՝ ԱԶԿ և Գեղարքունիքի մարզի ԱԱՊ դրամարկղներում առկա կանխիկ միջոցների մնացորդներից և Ծրագրի առանձին բանկային հաշիվների մնացորդներից՝ ՀՀ դրամով:

## 3 Այլ ուղղակի ծախսեր

| ԱՄՆ դոլար | 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ը |
|---|---|
| ԶԼՄ նյութեր և տպագրական ծախսեր | 19,446 |
| Գրասենյակի վարձակալության և կոմունալ ծախսեր | 37,231 |
| Գործուղման ծախսեր | 27,100 |
| Գրասենյակային ծախսեր | 10,715 |
| Կահույք, սարքավորումներ և համակարգչային ծրագրեր | 5,521 |
| Հաղորդակցության ծախսեր | 13,254 |
| Հեռուստատեսային և ռադիո հեռարձակումներ, գովազդներ | 19,818 |
| Ավտոմեքենաների շահագործման և տրանսպորտային ծախսեր | 2,814 |
| Այլ | 35,861 |
| | 171,760 |

## 4 Ֆոնդերի և դրամական միջոցների մնացորդների համադրում

Ստորև բերված է Ծրագրի ֆոնդերի և դրամական միջոցների մնացորդների համադրումը.

| ԱՄՆ դոլար | 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 2014թ. հունվարի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ֆոնդերի մնացորդ | 12,073 | 45,910 |
| Դրամական միջոցների մնացորդ (ծանոթ. 5) | 12,291 | 46,790 |
| Տարբերություն | (218) | (880) |
| | | |
| Համադրող հոդվածներ | | |
| Ծրագրային հաշվից կատարված և փոխհատուցման ենթակա ոչ-ծրագրային ելքեր (ՀԵԻԱ) | 28 | - |
| Ոչ-ծրագրային աղբյուրներից վճարված և փոխհատուցման ենթակա ծրագրային ծախսեր (ԱԶԿ) | (376) | (799) |
| Ծրագրային հաշվից կատարված և փոխհատուցման ենթակա ոչ-ծրագրային ելքեր (ԳՄԱԱՊ) | 130 | (81) |
| | (218) | (880) |

Ֆոնդերի օգտագործման հաշվետվության ամսաթվի դրությամբ փոխհատուցման ենթակա գումարները ՀԵԻԱ-ի և Գեղարքունիքի մարզի ԱԱՊ-ի կողմից վերադարձվել են ծրագրային հաշիվներին:

## 5 Դրամական միջոցներ

| ԱՄՆ դոլար | 2013թ. հունվարի 1-ի դրությամբ | 2014թ. հունվարի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Մնացորդներ բանկային հաշիվներում (ՀԵԻԱ) | 813 | 43,925 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկային հաշիվներում (ԱԶԿ) | 4,971 | 834 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկային հաշիվներում (ԳՄԱԱՊ) | 6,507 | 2,031 |
| | 12,291 | 46,790 |

Դրամական միջոցների մնացորդների շարժը Ծրագրի ավարտից հետո ներկայացված է ստորև՝

| ԱՄՆ դոլար | ՀԵԻԱ | ԱՁԿ | ԳԱԱՊ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների մնացորդ Ծրագրի փակման ամսաթվի դրությամբ | 43,925 | 834 | 2,031 | 46,790 |
| Ծրագրային ծախսերի մարում Ծրագրի փակման ամսաթվից հետո (2014թ. փետրվարի 1-ից մինչև 2014թ. օգոստոսի 28-ը) | | | | |
| *Աշխատակազմ* | (33,358) | (33) | (1,537) | (34,928) |
| *Մեդիա նյութեր և հրապարակումներ* | (147) | | | (147) |
| *Գործուղման ծախսեր* | (209) | | | (209) |
| *Գրասենյակային ծախսեր* | (861) | | | (861) |
| *Ավտոմեքենաների շահագործման և տրանսպորտային ծախսեր* | (74) | | | (74) |
| *Կապի ծախսեր* | (413) | | (59) | (472) |
| *Գրասենյակի վարձակալության և կոմունալ ծախսեր* | (588) | | (89) | (677) |
| *Ֆինանսական աուդիտի ծախս* | (1,817) | | | (1,817) |
| *Այլ* | (47) | | - | (47) |
| Ծրագրային ծախսերի մարում, որոնք չեն կատարվել ԱՄՆ ՄԶԳ ֆոնդերից | - | (799) | (81) | (880) |
| Դրամական միջոցների մնացորդ 2014թ. օգոստոսի 28-ի դրությամբ | 6,411 | 2 | 265 | 6,678 |
| Ֆինանսական աուդիտի վճար (սպասվող ծախս) | (4,816) | - | - | (4,816) |
| Դրամական միջոցների մնացորդ, որը ենթակա է վերադարձման ԱՄՆ ՄԶԳ-ը | 1,595 | 2 | 265 | 1,862 |

## 6 Ենթադրամաշնորհներ

| ԱՄՆ դոլար | 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ը | | |
|---|---|---|---|
| | ԱՁԿ | ԳԱԱՊ | Ընդամենը |
| Ենթադրամաշնորհների գծով կանխավճարներ | 66,634 | 44,642 | 111,276 |
| Ենթադրամաշնորհներից կատարված ծախսեր | | | |
| Աշխատակազմ | 47,834 | 41,026 | 88,860 |
| Այլ ուղղակի ծախսեր | 23,359 | 8,302 | 31,661 |
| | 71,193 | 49,329 | 120,521 |

## 7 Հարկում

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում գնված ապրանքները և մատուցված ծառայությունները ազատված են ԱԱՀ-ից՝ համաձայն 1992թ. դեկտեմբերի 15-ի ԱՄՆ կառավարության և ՀՀ կառավարության միջև «Մարդասիրական և տեխնիկական օժանդակության համար համագործակցության համաձայնագրի»:

Grant Thornton

ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002
Համագործակցության համաձայնագրի շրջանակներում
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի
ամփոփիչ ֆինանսական աուդիտ

2013թ.հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած
ժամանակաշրջանի համար

Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվություն և
Անկախ աուդիտորի դիտարկման եզրակացություն

Grant Thornton

# Անկախ աուդիտորի դիտարկման եզրակացություն ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության վերաբերյալ

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի վարչությանը
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 7, բն. 2

Մեր կողմից իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (Կազմակերպություն) «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի (Ծրագիր) 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի կից ներկայացված ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության դիտարկում: Մենք դիտարկումն իրականացրել ենք Որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի կողմից հաստատված ստանդարտներին համապատասխան: Մեր դիտարկման նպատակն էր որոշել, թե արդյոք ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը ճշմարիտ է ներկայացված՝ համաձայն ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության 2-րդ ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման սկզբունքի: Մեր կողմից ուսումնասիրվել է նաև ծախսերի համաֆինանսավորման ներդրումների տրամադրմանը և դրանց հաշվառմանը վերաբերող ներքին վերահսկողության համակարգը:

Դիտարկման աշխատանքները հիմնականում բաղկացած են Կազմակերպության աշխատակազմից կատարված հարցումներից, ինչպես նաև ֆինանսական տվյալների նկատմամբ վերլուծական ընթացակարգերի կիրառումից: Դրանք զգալիորեն ավելի սահմանափակ շրջանակ ունեն, քան այնպիսի ուսումնասիրությունը, որի նպատակն է կարծիք արտահայտել ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության վերաբերյալ: Հետևաբար մենք նման կարծիք չենք արտահայտում:

Դիտարկման արդյունքում մենք չհայտնաբերեցինք որևէ բան, որը կստիպեր մեզ ենթադրել, որ Կազմակերպությունը բոլոր էական առումներով ճշմարիտ չի ներկայացրել ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը՝ ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության 2-րդ ծանոթագրությունում ներկայացված հաշվապահական հաշվառման սկզբունքի համաձայն:

Սույն հաշվետվությունը նախատեսված է Կազմակերպության և ԱՄՆ ՄԶԳ համար: Այնուամենայնիվ, ԱՄՆ ՄԶԳ կողմից հրապարակումից հետո սույն հաշվետվությունը դառնում է հանրամատչելի և դրա տարածումը չի սահմանափակվում:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաքելության ղեկավար

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Երևան, 28 օգոստոսի 2014թ.

# Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվություն

2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար

| ԱՄՆ դոլար | | | | Խնդրահարույց ծախսեր | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բյուջե | Փաստացի ծախսեր | Դեֆիցիտ | Անթույլատրելի | Չհիմնավորված | Notes |
| *Դրամային* | | | | | | |
| Այլ ուղղակի ծախսեր | - | - | - | - | - | |
| *Ոչ դրամային* | | | | | | |
| Այլ ուղղակի ծախսեր | 53,600 | 54,717 | - | - | - | 3 |
| **Total** | **53,600** | **54,717** | | | | |

*Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը ստորագրվել է Կազմակերպության ղեկավարության կողմից 2014թ. օգոստոսի 28-ին: Սույն հաշվետվության 33-34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ծախսերի համաֆինանսավորման հաշվետվության բաղկացուցիչ մասը:*

*Կարեն Զադոյան*
Նախագահ

*Ավարդ Հովհաննիսյան*
Գլխավոր հաշվապահ

# Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությանը կից ծանոթագրություններ

*2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար*
*ԱՄՆ դոլարով*

## 1 Ընդհանուր նկարագրություն

Համաձայն «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի վերաբերյալ թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի (2014թ. հունվարի 17-ի փոփոխություններով), «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ն (Կազմակերպություն, ՀԵԻԱ) պարտավորվում է Ծրագրի ամբողջ ժամկետի ընթացքում կատարել 53,600 ԱՄՆ դոլար գումարի համաֆինանսավորման ներդրում:

## 2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### ա. Պատրաստման հիմունքները

Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը պատրաստվել է Կազմակերպության կողմից սեփական ներդրումների վերաբերյալ հաշվառման հիման վրա:

Ծախսերի համաֆինանսավորումը կատարվում է ոչ-դրամային տեսքով, և ճանաչվում է տրամադրված ապրանքների, նյութերի և ծառայությունների փաստացի տրամադրման պահին:

### բ. Գործառնական և ներկայացման արժույթ

Ծրագրի գործառնական արժույթներն են ԱՄՆ դոլարը և ՀՀ դրամը: Ծախսերի համաֆինանսավորման հաշվետվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով:

### գ. Արտարժույթ

ՀՀ դրամով հաշվառված համաֆինանսավորման ներդրումները փոխարկվում են ԱՄՆ դոլարի` կիրառելով թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի բաղկացուցիչ մաս կազմող բյուջեի հաշվարկների համար կիրառված փոխարժեքը` 400 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց:

### դ. Ծախսերի համաֆինանսավորման ներդրումներ

Ծախսերի համաֆինանսավորման ներդրումները տրամադրվում են ոչ-դրամային տեսքով և ներառում են ծրագրային այն ծախսերը, որոնք հանդիսանում են ԱՄՆ կառավարությանը չառնչվող կազմակերպությունների կամ անձանց կողմից տրամադրված ծառայություններ կամ գույք, կամ դրանց անհատույց օգտագործման հնարավորություն:

Ոչ-դրամային ներդրումների արժեքը (կամավորների ծառայություններ, նյութեր, սարքավորումներ, տարածքի օգտագործում, և այլն) որոշվում է համաձայն հետևյալ գնահատման սկզբունքների.

- Տրամադրված տարածքի արժեքը չպետք է գերազանցի նույն շրջանում նմանատիպ տարածքի իրական վարձակալական արժեքը, ինչը պետք է հիմնավորվի շուկայի բավարար հետազոտություններով:
- Վարձակալված սարքավորումների արժեքը չպետք է գերազանցի դրանց իրական վարձակալական արժեքը:

## 3 Այլ ուղղակի ծախսեր

| ԱՄՆ դոլար | 2011թ. օգոստոսի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ը |
|---|---|
| Գրասենյակի վարձակալություն | 42,467 |
| Ավտոմեքենաների վարձակալություն | 12,250 |
| | 54,717 |

Տրամադրված տարածքի և ավտոմեքենաների գծով ներդրումները հաշվառվել են համաձայն Ծրագրի հաստատված բյուջեով նախատեսված միավոր արժեքների՝ միևնույն ժամանակ պահպանելով ոչ-դրամային ներդրումների արժեքի գնահատման սկզբունքներով սահմանված սահմանափակումները:

Grant Thornton

ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002
Համագործակցության համաձայնագրի շրջանակներում
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի
ֆինանսական աուդիտ

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած
ժամանակաշրջանի համար

Անկախ աուդիտորի եզրակացություն ներքին
վերահսկողության վերաբերյալ

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն ներքին վերահսկողության վերաբերյալ

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի վարչությանը
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 7, բն. 2

Մեր կողմից իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (Կազմակերպություն) կողմից իրականացվող «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի (Ծրագիր) 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆոնդերի օգտագործման հաշվետվության աուդիտ, որի վերաբերյալ ներկայացրել ենք անկախ աուդիտորի եզրակացություն 2014թ. օգոստոսի 28-ին: Մենք նաև իրականացրել ենք ծախսերի համաֆինանսավորման առանձին հաշվետվության դիտարկում:

Ինչպես ներկայացված է ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ մեր անկախ աուդիտորի եզրակացությունում, բացառությամբ բավարար շարունակական կրթական ծրագրի և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից որակի վերահսկողության արտաքին ստուգման առկայության, մենք աուդիտն իրականացրեցինք ԱՄՆ Գլխավոր վերահսկիչի կողմից հաստատված *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* համաձայն: Աուդիտորական աշխատանքները պլանավորելիս և իրականացնելիս մենք ուսումնասիրել ենք Կազմակերպության՝ ֆինանսական հաշվետվություններին առնչվող ներքին վերահսկողության համակարգը: Այդ ուսումնասիրությունը հիմք է հանդիսացել ֆոնդերի օգտագործման հաշվետվության վեաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով աուդիտորական ընթացակարգերի պլանավորման համար, սակայն ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու համար: Հետևաբար, մենք նման կարծիք չենք արտահայտում:

Ներքին վերահսկողության թերություն առկա է այն դեպքում, երբ որևէ վերահսկողության կառուցվածքը կամ իրականացումը թույլ չի տալիս ղեկավարությանը կամ աշխատակիցներին իրենց հանձնարարված պարտականությունների կատարման բնականոն ընթացքում կանխել կամ հայտնաբերել և ուղղել սխալները ճիշտ ժամանակին: Էական թուլություն է համարվում ներքին վերահսկողության այն թերությունը կամ թերությունների զուգակցումը, որի դեպքում կա ողջամիտ հավանականություն, որ Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում առկա էական սխալները հնարավոր չի լինի կանխել կամ հայտնաբերել և ուղղել ճիշտ ժամանակին: Ինչպես նշված է վերևում մեր կողմից ներքին վերահսկողության համակարգում որևէ էական թերություն չի հայտնաբերվել:

Սույն հաշվետվությունը նախատեսված է Կազմակերպության և ԱՄՆ ՄԶԳ համար: Այնուամենայնիվ, ԱՄՆ ՄԶԳ կողմից հրապարակումից հետո սույն հաշվետվությունը դառնում է հանրամատչելի և դրա տարածումը չի սահմանափակվում:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաքելության ղեկավար

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Երևան, 28 օգոստոսի 2014թ.

Grant Thornton

ԱՄՆ ՄԶԳ թիվ AID-111-A-11-00002
Համագործակցության համաձայնագրի շրջանակներում
«Հայաստանի երիտասարդ իրավաբանների
ասոցիացիա» ՀԿ-ի կողմից իրականացվող

«Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի
ֆինանսական աուդիտ

2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած
ժամանակաշրջանի համար

Անկախ աուդիտորի եզրակացություն
համապատասխանության վերաբերյալ

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն համապատասխանության վերաբերյալ

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի վարչությանը
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փ. 7, բն. 2

Մեր կողմից իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության թիվ AID-111-A-11-00002 Համագործակցության համաձայնագրի շրջանակներում «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի (Կազմակերպություն) կողմից իրականացվող «Հայաստանն ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի (Ծրագիր) 2013թ. հունվարի 1-ից մինչև 2014թ. հունվարի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆոնդերի օգտագործման հաշվետվության աուդիտ, որի վերաբերյալ ներկայացրել ենք անկախ աուդիտորի եզրակացություն 2014թ. օգոստոսի 28-ին: Մենք նաև իրականացրել ենք ծախսերի համաֆինանսավորման առանձին հաշվետվության դիտարկում:

Ինչպես ներկայացված է ֆոնդերի օգտագործման հաշվետվության վերաբերյալ մեր անկախ աուդիտորի եզրակացությունում, բացառությամբ բավարար շարունակական կրթական ծրագրի և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից որակի վերահսկողության արտաքին ստուգման առկայության, մենք աուդիտն իրականացրեցինք ԱՄՆ Գլխավոր վերահսկիչի կողմից հաստատված *ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների* համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիքներ, որ ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը զերծ է էական խեղաթյուրումներից, որոնք կարող են բխել Համագործակցության համաձայնագրի պայմանների, կանոնակարգերի և իրավական ակտերի խախտումից, որոնք ուղղակի և էական ազդեցություն ունեն ֆոնդերի օգտագործման հաշվետվության մեջ ներկայացված գումարների որոշման վրա:

Կազմակերպության համապատասխանությունը համաձայնագրի պայմաններին, կիրառելի կանոնակարգերին և գործող իրավական ակտերին հանդիսանում է Կազմակերպության ղեկավարության պատասխանատվությունը: Ֆոնդերի օգտագործման հաշվետվության՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով մենք իրականացրեցինք Համագործակցության համաձայնագրի պայմանների, կանոնակարգերի և իրավական ակտերի պահանջներին Կազմակերպության գործունեության համապատասխանության ստուգում: Այնուամենայնիվ, մեր նպատակը չի հանդիսացել այդ պայմաններին ընդհանուր համապատասխանության վերաբերյալ կարծիքի արտահայտումը, հետևաբար մենք նման կարծիք չենք արտահայտում: Մենք իրականացրել ենք նաև ծախսերի համաֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրի որոշակի դրույթներին և գործող իրավական ակտերին Կազմակերպության համապատասխանության ստուգում:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում մենք չենք հայտնաբերել էական որևէ անհամապատասխանություն, որի մասին անհրաժեշտ կլիներ տեղեկացնել, ինչպես նախատեսված է ԱՄՆ Պետական աուդիտի ստանդարտների պահանջով:

Սույն հաշվետվությունը նախատեսված է Կազմակերպության և ԱՄՆ ՄԶԳ համար: Այնուամենայնիվ, ԱՄՆ ՄԶԳ կողմից հրապարակումից հետո սույն հաշվետվությունը դառնում է հանրամատչելի և դրա տարածումը չի սահմանափակվում:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաքելության ղեկավար

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Երևան, 28 օգոստոսի 2014թ.

# Հավելված 1-Հիմնական միջոցների ցանկ

*Սկզբում ձեռքբերման գինը հաշվապահորեն ձևակերպվել է ՀՀ դրամով այնուհետև Հիմնական ակտիվների մատյան մուտքագրելու ժամանակ այն թարգմանվել է ԱՄՆ դոլարի կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի այդ օրվա փոխարժեքը:

| Նկարագրություն | Ճանաչման ամսաթիվ | Ձեռքբերման գին (ԱՄՆ դոլար)* | Վայր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|
| 1. Գրասենյակի տեխնիկա | | | | |
| Մարտկոց | 2012թ. հոկտեմբերի 15 | 123 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագ ործման մեջ |
| Flash Canon 430 | 2012թ. հոկտեմբերի 15 | 490 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Ֆոտոխցիկ Sony NEX-VG20 | 2012թ. հոկտեմբերի 15 | 858 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Տեսաձայնագրիչ Canon EOS 600D | 2012թ. հոկտեմբերի 15 | 3,126 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Մարտկոց | 2012թ. հոկտեմբերի 15 | 135 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Ֆոտոխցիկի լուսարձակման սարք | 2012թ. հոկտեմբերի 15 | 172 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Մարտկոց Sony | 2012թ. հոկտեմբերի 15 | 189 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Ֆոտոխցիկի եռոտանի | 2012թ. հոկտեմբերի 15 | 74 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| MFP Work center Canon I-SENSYS MF4570DN | 2012թ. հոկտեմբերի 22 | 384 | ԱՋԿ գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Օդորակիչ LG S-126GH | 2013թ. օգոստոսի 14 | 590 | ԱՋԿ գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| | | 6,141 | | |
| 2. Համակարգչային տեխնիկա | | | | |
| Նոթբուք Acer CPU 1.6GHz, RAM 2GB, HDD 320 GB | 2012թ. սեպտեմբերի 20 | 478 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Մոնիտոր LG FLATRON E2441 | 2012թ. սեպտեմբերի 27 | 279 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| MB ASUS, CPU i7, RAM 8GB, HDD 2 TB + 500 GB, Video 2Gb, Մոնիտոր 24", UPS 650, Մկնիկ, KB, DVD-ROM | 2012թ. սեպտեմբերի 27 | 1,458 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Dell Inspiron Q 15 (N5110) Glossy black, 15.6" HD (1366X768) WLED Glare, Core i3-2350M 2.30 GHz/3MB | 2012թ. նոյեմբերի 22 | 602 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Dell Inspiron Q 15 (N5110) Glossy black, 15.6" HD (1366X768) WLED Glare, Core i3-2350M 2.30 GHz/3MB | 2012թ. նոյեմբերի 22 | 602 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Dell Inspiron Q 15 (N5110) Glossy black, 15.6" HD (1366X768) WLED Glare, Core i3-2350M 2.30 GHz/3MB | 2012թ. նոյեմբերի 22 | 602 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Dell Inspiron Q 15 (N5110) Glossy black, 15.6" HD (1366X768) WLED Glare, Core i3-2350M 2.30 GHz/3MB | 2012թ. նոյեմբերի 22 | 602 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |

| Նկարագրություն | Ճանաչման ամսաթիվ | Ձեռքբերման գին (ԱՄՆ դոլար)* | Վայր | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|
| Dell Inspiron Q 15 (N5110) Glossy black, 15.6" HD (1366X768) WLED Glare, Core i3-2350M 2.30 GHz/3MB | 2012թ. նոյեմբերի 22 | 602 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| Նոթբուք Acer | 2013թ. օգոստոսի 14 | 688 | ՀԵԻԱ, Երևանի գրասենյակ | Գտնվում է օգտագործման մեջ |
| | | 5,913 | | |

